ԱԿՆԱՐԿ

2025

Եվրոպական
Ներդրումային բանկ | Խումբ

ԱԿՆԱՐԿ

2025

Եվրոպական
Ներդրումային բանկ | Խումբ

Ակնարկ, 2025 թ.

© Եվրոպական ներդրումային բանկ, 2025 թ.:
98-100, boulevard Konrad Adenauer
L-2950 Luxembourg

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Իրավունքների և լիցենզավորման վերաբերյալ բոլոր հարցերն ուղղել publications@eib.org էլ. փոստի հասցեին:

ԵՆԲ-ի գործունեության մասին լրացուցիչ տեղեկություններին ծանոթացեք մեր կայքում՝ www.eib.org. Կարող եք գրել նաև info@eib.org. էլ.փոստի հասցեին: Մեր նորությունների էլեկտրոնային տեղեկագիրը ստացեք հետևյալ հղումով՝ www.eib.org/sign-up.

© Լուսանկարների աղբյուրներ՝ EIB, Energy Dome, Matr Foods, Rim Foam, Shutterstock, GettyImages

Հրաժարագիր
Թարգմանության և բնօրինակի միջև առկա անհամապատասխանության դեպքում, գերակայում է բնօրինակ լեզուն:

Հրատարակվել է Եվրոպական ներդրումային բանկի կողմից:
Տպագրված է FSC® թղթի վրա:

pdf: QH-01-25-001-HY-N ISBN 978-92-861-5926-8 doi: 10.2867/3191882

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

Որպես աշխարհի առաջատար բազմակողմանի հաստատություններից մեկը՝ Եվրոպական ներդրումային բանկը խթանում է առաջընթացն այնտեղ, որտեղ դրա կարիքն ամենաշատը կա: Մենք հիմնադրվել ենք 1958 թվականին և տնօրինվում ենք Եվրոպական Միության 27 անդամ պետությունների կողմից. մենք տրամադրում ենք ֆինանսական ռեսուրսներ և կատարում ենք նշանակալի փոփոխություններ՝ բարելավելով հանրային ծառայությունները, աջակցելով բիզնեսին, ստեղծելով աշխատատեղեր և կառուցելով կայուն տնտեսություններ:

ԿԱՅՈՒՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Մենք Եվրոպայում կլիմայի փոփոխության դեմ պայքարող բանկն ենք: Մենք հավատում ենք ավելի կանաչ, ավելի կայուն ապագային: Մեր աջակցությունը, սկսած նորարարական լուծումների ֆինանսավորումից մինչև պայքար կլիմայի փոփոխության դեմ, մինչև տարբեր մեծության բիզնեսների կանաչ տեխնոլոգիաներին անցման ֆինանսավորում, փոխակերպող ուժ ունի: Հանդիսանալով ԵՆԲ Խմբի անդամ՝ Եվրոպական ներդրումային ֆոնդը տրամադրում է վենչուրային կապիտալ և խթանում է փոքր ու միջին ձեռնարկություններին զբաղվել նորարարությամբ, ընդլայնվել ու բարգավաճել:

ԳԼՈԲԱԼ ԽԱՂԱՑՈՂ ՏՈ ԿԱՌՈՒՅՑ

Կատարելով ավելի քան 1 տրիլիոն եվրոյի ներդրում ավելի քան վեց տասնամյակի ընթացքում՝ մենք վստահելի ուժ ենք կապիտալի միջազգային շուկաներում և հավաքագրում ենք դրամական միջոցներ մեր պարտատոմսերի վաճառքից՝ ամբողջ աշխարհի մեր հաճախորդներին մրցունակ ֆինանսավորում առաջարկելու համար:

ՄԵՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ

350 միլիարդ եվրո

ներդրում ԵՆԲ Խմբի աջակցությամբ

17,2 միլիարդ եվրո

կայուն զարգացող քաղաքներին և տարածաշրջաններին

50,7 միլիարդ եվրո

կանաչ տեխնոլոգիաների ֆինանսավորմանը

63,4 միլիարդ եվրո

հավաքագրում պարտատոմսերի շուկաներում

16,2 միլիարդ եվրո

փոքր և միջին ձեռնարկություններին

8,7 միլիարդ եվրո

սոցիալական ենթակառուցվածքներին

19,8 միլիարդ եվրո

նորարարությանը, թվային տեխնոլոգիաներին և գիտելիքի խթանմանը

Ավելի քան 368 000

ուսանող օգտվել է ֆինանսավորումից

13,7 միլիոն

մարդ խմում է անվտանգ to մաքուր ջուր

ԵՆԲ Խմբի ֆինանսավորում՝ 88,8 միլիարդ եվրո՝ ներառյալ8,4 միլիարդ եվրո՝ ԵՄ-ից դուրս:

14,7 միլիոն

տնային տնտեսություն ապահովվել է հոսանքով

5,9 միլիոն

մարդ ունի ավելի լավ սանիտարահիգիենիկ պայմաններ

854 000

5G կապի բաժանորդագրություն

305 միլիոն

լրացուցիչ ուղևորափոխադրում հանրային տրանսպորտով

2 միլիոն

մարդ պաշտպանված է ջրհեղեղներից

20 964 Մվտ/ժ

վերականգնելի էլեկտրաէներգիայի արտադրման կարողություն

107 370 կմ

տեղադրված կամ նորացված հոսանքի գիծ

67,5 միլիոն

մարդ օգտվում է բարելավված քաղաքային և տարածքային ենթակառուցվածքից

14,9 միլիոն

մարդ ստանում է ավելի լավ բուժսպասարկման ծառայություններ

ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամեն տարի մենք հարյուրավոր նոր նախագծեր ենք ֆինանսավորում՝ սկսած կլիմայի փոփոխության դեմ պայքարից մինչև թվայնացում, անվտանգությունից և պաշտպանությունից մինչև մշտական կացարանով ապահովում կամ գյուղատնտեսություն և մաքուր ջուր: Մեր աջակցությունն օգնում է Եվրոպայի քիչ զարգացած տարածաշրջաններին, արագացնում է կանաչ տեխնոլոգիաների ֆինանսավորումը և խթանում է ներդրումները կապիտալի շուկաներում: Այս ամբողջ աշխատանքի նպատակն է ապահովել ավելի անվտանգ, բարգավաճ և կայուն ապագա աշխարհի համար:

«Warehouses de Pauw» ընկերության արևային վահանակներն ամեն տարի կարտադրեն մինչև 350 գիգավատ/ժամ էլեկտրաէներգիա, որը բավարար է 150 000 մարդու համար:

ԿԼԻՄԱՅԻ ԲԱՆԿԸ

Եվրոպական ներդրումային բանկը մաքուր էներգիայի անցմանն ուղղված աշխատանքների առաջնագծում է: Մենք խթանում ենք այն ներդրումները, որոնք մեղմացնում են կլիմայի փոփոխությունը՝ կրճատելով, կանխելով կամ կլանելով ջերմոցային գազերի արտանետումները: Եվ մենք ֆինանսավորում ենք նախագծեր, որոնք օգնում են համայնքներին հարմարվել փոփոխվող կլիմային:

50,7 միլիարդ եվրո

կանաչ տեխնոլոգիաների ֆինանսավորման համար 2024 թվականին

1 տրիլիոն եվրո

կլիմայի և բնապահպանական նախագծերի համար այս տասնամյակում

ՇԱՀՈՒԹԱԲԵՐ ԱՆՑՈՒՄ ԿԱՆԱՉ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻՆ

«Warehouses de Pauw» ընկերությունն իր տանիքները վերածում է էլեկտրակայանների՝ Ռումինիայի, Բելգիայի և Նիդեռլանդների իր պահեստներում տեղադրելով արևային վահանակներ: Այս փոփոխությամբ նրանք լուծում են էլեկտրաէներգիայի բարձրացող գների հարցը և ստեղծում են լրացուցիչ եկամուտ՝ հոսանք մատակարարարելով «de Pauw»-ի հաճախորդներին: Այս նախագծին հատկացված 250 միլիոն եվրոյի մեր վարկը ցույց է տալիս, թե անհատ հաճախորդներին ցուցաբերած մեր աջակցությունն ինչպես է նպաստում լայնատարած անցմանը կանաչ տեխնոլոգիաներին:

Պողպատի արտադրության ուսումնասիրմանն ուղղված հետազոտությունն օգնում է շրջակա միջավայրին՝ միևնույն ժամանակ «Voestalpine» ընկերության համար լինելով ամբողջ աշխարհում մրցակցելու արդյունավետ ուղի:

2

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նորագույն տեխնոլոգիաները կարևոր են Եվրոպայի ապագա արտադրողականության և գլոբալ տաքացման դեմ պայքարի համար: Մեր ներդրումները մեծացնում են Եվրոպայի կարողությունը՝ կատարելու արտանետումների կրճատմանն ուղղված նորարարություններ միկրոսխեմաների, բժշկակենսաբանական գիտությունների և զուտ զրոյական արտանետումների ոլորտներում: Մենք ներդնում ենք նաև հետագա տնտեսական աճի համար կարևոր այլ ոլորտներում, օրինակ՝ արհեստական բանականություն, քվանտային հաշվողական տեխնիկա և արտադրական առաջադեմ տեխնոլոգիաներ:

854 000

5G բջջային կապի բաժանորդագրություն 2024 թվականին

ՊՈՂՊԱՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՉ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ

Երկաթի հանքանյութը պողպատի վերածելու ավանդական մեթոդը ռեսուրսատար է և աղտոտում է շրջակա միջավայրը: «Voestalpine» ավստրիական պողպատաձուլական ընկերությունը Եվրոպական ներդրումային բանկի հատկացրած 300 միլիոն եվրոյի վարկն օգտագործում է ավելի լավ պողպատ մշակելու համար, որն ունի ավելի բազմակողմանի կիրառելիություն և ավելի երկար պիտանիություն: Ընկերությունը փոխում է նաև իր արտադրական գործընթացները՝ ավելի քիչ էներգիա օգտագործելու, ավելի քիչ հումքային նյութեր ծախսելու և շրջակա միջավայրի աղտոտումը նվազեցնելու համար:

Դանիական «Esbjerg» նավահանգիստը փոխվում է՝ սպասարկելու պաշտպանության և կանաչ էներգիայի ոլորտները:

3

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենք նպաստում ենք Եվրոպայի խաղաղությանը՝ աջակցելով անվտանգության և պաշտպանության կարողությունների մեծացմանը: Մենք օգնում ենք հասանելի դարձնել ֆինանսավորումը այն եվրոպական բիզնեսների և նորարարների համար, որոնք մեր քաղաքացիներին պաշտպանող նախագծեր ունեն: Մեր ֆինանսավորման լուծումները՝ հետախուզությունից մինչև տեսահսկում, կիբեռանվտանգության լուծումներ, ենթակառուցվածքներ և ռազմական շարժունություն, նախատեսված են խթանելու այն գաղափարները, որոնք ապահովում են Եվրոպայի անվտանգությունը, խթանում են ճկունությունը և նորարարությունը:

Մեր նպատակը՝ ներդնել

6

միլիարդ եվրո

անվտանգության և պաշտպանության ոլորտում

ԴԱՆԻԱԿԱՆ ՆԱՎԱՀԱՆԳՍՏԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

«Esbjerg»-ը 156 տարվա նավահանգիստ է Դանիայում, որը ներկայումս փոխակերպվում է, որպեսզի ընդունի ռազմական նավեր և սպասարկի մերձափնյա հողմաէներգետիկայի ոլորտին: Եվրոպական ներդրումային բանկի հատկացրած 115 միլիոն եվրո վարկի օգնությամբ նավահանգիստը ներդրում է կատարում նոր տերմինալի կառուցման մեջ:

Իշիա կղզու Կասամիչոլա Տերմե բնակավայրն զգալիորեն տուժել է սողանքից: Մենք օգնել ենք վերակառուցել կղզին և ավելի դիմացկուն դարձնել այն հետագա աղետներին:

4

ՀԱՄԱԽՄԲՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք ներդնում ենք համախմբման համար, այլ կերպ ասած, այն նախագծերում, որոնք խթանում են կայուն զարգացումը և ընդլայնում են տնտեսական ու սոցիալական ինտեգրացիան Եվրոպական Միության տարածաշրջաններում: Այս ներդրումները կրճատում են տարածաշրջանային անհամապատասխանությունները, հզորացնում են անտեսված համայնքները և օգնում են նրանց բարգավաճել:

38
միլիարդ եվրո

համախմբման ֆինանսավորում 2024 թվականին

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ԴԻՄԱՑԿՈՒՆ

2022 թվականի նոյեմբերին Իտալիայի Նեապոլի ծովածոցի Իշիա կղզում տեղացած հորդ անձրևը, սողանքների պատճառ դառնալով, խլեց 23 մարդու կյանք և քշեց տարավ տներ ու մեքենաներ: Եվրոպական ներդրումային բանկը կղզուն հատկացրել է 1 միլիարդ եվրո արժողությամբ ֆինանսական փաթեթ՝ աղետից հետո վերակառուցողական աշխատանքներ կատարելու համար:

Կիպրոսի տեխնոլոգիական համալսարանի ավելի քան 700 ուսանողի սենյակներով ապահովելու և կրթական տարածքները բարեկարգելու նախագիծն ընդգծում է մեր հանձնառությունը կրթության և ներառականության գործում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Բարձրորակ կացարանները, կրթությունը և բուժսպասարկման ծառայությունները կարևոր են Եվրոպայի ապագայի համար: Մեր ֆինանսավորումը բարելավում է քաղաքները, մեծացնում է մատչելի բնակարանով ապահովման հնարավորությունները և կատարելագործում է սոցիալական ծառայությունները: Ամեն տարի մենք օգնում ենք Եվրոպայում կառուցել կամ վերանորոգել ավելի քան 100 000 տուն և բարեկարգում ենք մայրցամաքի դպրոցների ու համալսարանների դասարաններն ու այլ ենթակառուցվածքներ:

67,5 միլիոն

մարդու համար 2024 թվականին բարելավվել են քաղաքային և տարածքային ենթակառուցվածքները

ՍԵՆՅԱԿՆԵՐ ՈՒՍՄԱՆ ՀԱՄԱՐ

Ամեն տարի Կիպրոսի տեխնոլոգիական համալսարանի հարյուրավոր ուսանողներ ողջամիտ գներով հարմար կացարանների երկար ու դժվար փնտրտուքի մեջ են: 125 միլիոն եվրոյի մեր վարկն օգնել է մատչելի կացարանային տարբերակներ կառուցել և բարեկարգել լսարաններն ու համալսարանական այլ կառույցները:

Մսի փոխարինիչները, ինչպիսին է «Matr Foods» ընկերության արտադրանքը, վերջին տարիներին զգալիորեն կատարելագործվել են: Այս նախագիծը սննդի արժեշղթայում կայուն զարգացումը խթանելուն ուղղված մեր աշխատանքի մի մասն է:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսությունը կենսական դեր է կատարում սննդի անվտանգության և կլիմայի փոփոխությանը դիմակայելու հարցում: Մենք ֆինանսավորում ենք ձկնորսության, անտառապահության, սննդի որակի, գյուղական շրջանների զարգացման և կլիմայի համար անվնաս արտադրության կազմակերպման նախագծեր: Մեր վարկերը և խորհրդատվական ծառայություններն օգնում են գյուղատնտեսներին ավելացնել ապրուստի միջոցները, պաշտպանել շրջակա միջավայրը և նվազեցնել գյուղատնտեսական գործունեությունից առաջացող ածխածնային արտանետումները:

3 միլիարդ եվրո

ներդրումային փաթեթ՝ երիտասարդ գյուղատնտեսների և գենդերային հավասարության համար

5 միլիարդ եվրո

գյուղատնտեսության և կենսատնտեսության համար ամեն տարի

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԵՐ

Դանիական «Matr Foods» ընկերությունը մշակել է մսին փոխարինող արտադրանք, որն ունի մսի նույն համն ու կազմությունը, սակայն չի վնասում շրջակա միջավայրին կամ սպառողների առողջությանը: Այն արտադրվում է բուսական հիմքով տեղական բաղադրիչներից, որոնցից պատրաստվում են կոտլետներ սնկային կուլտուրաների խմորման միջոցով: Մենք այս նախագծին աջակցում ենք 20 միլիոն եվրոյի վարկով:

Մավրիտանիայի «Rim Foam» և այլ ընկերություններին տրամադրած մեր աջակցությունն ավելացնում է զբաղվածությունը, օգնում է կանանց և խթանում է ձեռնարկատիրությունը:

ԳԼՈԲԱԼ ՆԵՐԴՐՈՒՄ

Բացի Եվրոպական Միությունից, մենք կարևորում ենք աջակցությունը Ուկրաինային և խթանում ենք կայուն զարգացումն այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսին է Միջերկրածովյան և Ենթասահարական Աֆրիկան: Ամբողջ աշխարհում մենք նպաստում ենք կլիմայի փոփոխության դեմ պայքարին և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացմանը: Մենք ջրամատակարման համաշխարհային ոլորտում ամենախոշոր վարկատուներից մեկն ենք:

Բարելավված առողջապահություն և ավելի շատ պատվաստանյութեր ավելի քան

100 միլիոն մարդու համար

ԳԼՈԲԱԼ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Երբ Մավրիտանիայում շեյխ Մոհամեդ Էլկարաչին հորից հետո ստանձնեց սպունգի արտադրության բիզնեսը, նա ցանկանում էր աշխատանքի ընդունել կանանց, բայց գործարանը նույնիսկ կանանց համար նախատեսված զուգարաններ չուներ: «Ես առանձին զուգարաններ ավելացրի», ասում է նա, «որպեսզի կանայք, այստեղ աշխատելով, ավելի հարմարավետ զգան իրենց»: Շուտով նա սկսեց կանանց ընդունել աշխատանքի կարևոր պաշտոններում: Տեղական բանկի միջոցով մենք աջակցեցինք նրա փոփոխություններին:

Կապիտալի շուկաների միությունը կարող է օգնել ընկերություններին ստանալ իրենց աճի համար անհրաժեշտ ֆինանսավորումը և ներդնել այն կանաչ տեխնոլոգիաներում:

ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Կապիտալի շուկաների միությունը մի ծրագիր է, որն ապահովում է ներդրումների և խնայողությունների հոսքը Եվրոպական Միության ամբողջ տարածքում: Այս ծրագրից օգուտ կստանան անհատները, ներդրողները և ընկերությունները՝ անկախ բնակության վայրից: Կապիտալի մեկ շուկան ավելի լավ պայմաններ կստեղծի նոր տեխնոլոգիաների, էներգիայի արդյունավետության և ենթակառուցվածքների նախագծերի համար Եվրոպական Միության այն տարածքներում, որտեղ ֆինանսավորումը ներկայումս դժվարամատչելի է:

Մենք ստեղծում ենք ֆինանսական գործիքներ, որոնք կարող են կապիտալի շուկայի միության իրական հիմնաքարերը լինել: Պարտատոմսերի մեր թվային գործարքները, օրինակ, խթանում են թվային ինտեգրացիան եվրոպական ֆինանսական համակարգում և մեծացնում են հասանելիությունը փոքր ընկերությունների համար, որոնք հիմնականում ապավինում են բանկային վարկերին:

Ավելի քան

110

միլիարդ եվրո

կլիմայի փոփոխության դեմ պայքարի իրազեկման և կայուն զարգացման մասին իրազեկման պարտատոմսերում

Եվրոպական ներդրումային բանկի առաջնահերթությունների
մասին մանրամասն իմացեք այստեղ

ԱԿՆԱՐԿ

2025

Եվրոպական
ներդրումային բանկ | Խումբ

pdf: ISBN 978-92-861-5926-8

© Եվրոպական ներդրումային բանկ, 01/2025 թ HY 2024-0348